Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

23.04. 2019թ.
Ժամ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Բալբաբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Ղազարյան (ԳԱ), Ն. Մուկուչյան (ԲԱ)
Ն. Պողոսյան (ԳԱ), Մ. Ջալաթյան (ԲԱ
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

I. **<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>**
(Ա.Բալբաբյան)

1.1 Ընդունել ի գիտություն որ.

1.2 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.3 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի **«ԼԵվ» ՍՊԸ** -ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին: **«ԼԵՎ» ՍՊԸ** -ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **258000 /երկու հարյուր հիսունութ հազար/** ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետի՝ որոշեց մերժել «ԼԵՎ» ՍՊԸ -ի հայտը,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1. **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29 >> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին մասին**

(Ա.Բալբաբյան)

2.1 Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով 7-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՋԱՏԵԳ» ՍՊԸ –ն:

2.2 Հանձնաժողովի քարտուղարին՝

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ՋԱՏԵԳ» ՍՊԸ-ին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Ա.Բալբաբյան)

3.1 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա.Բալբաբյան
Անդամներ՝		Է. Ղազարյան
		Ն. Մուկուչյան
		Ն. Պողոսյան
		Մ. Ջալաթյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան